**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**ՂԵԿԱՎԱՐ**

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8
0054, Ереван, Давидашен 4, ул. А. Микояна 109/8
109/8, A. Mikoyan str., Davidashen 4, Yerevan 0054
Հեռ./Тел./Tel. (+374 10) 31 77 17
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 36 34 49
Էլ. փոստ / E-mail: mes@mes.am

N 7/17.4/3434-16
23. 03 2016 թ.

Ալավերդու Օրհուս
կենտրոնի համակարգող
Ա. Էվոյանին

*Ի պատասխան Ձեր 15.03.2016թ.*
*գրության*

Հարգելի տիկին Էվոյան

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ելնելով բնակչության և տարածքների պաշտպանության իր գործառույթներից՝ ՀՀ բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով ամեն տարի կազմում է գետերի և սելավատարերի հեղեղավտանգ տեղամասերի ցանկը՝ և անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների առաջարկով ներկայացնում ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 16-ի N 931-Ա որոշմամբ գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման ու իրականացման պետական կառավարման լիազոր մարմին ճանաչված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը: 2015թ. կազմված և լիազոր մարմին ներկայացված ցանկում ընդգրկվել է նաև Ալավերդի քաղաքով հոսող Դեբեդ գետի ափապաշտպան հենապատի վտանգավոր հատվածը:

Միաժամանակ հայտնում եմ, որ Ալավերդի քաղաքով հոսող Դեբեդ գետի ափապաշտպան հենապատի վտանգավոր հատվածի կանխարգելման (վտանգի վերացման) միջոցառումները ներառված են նաև ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 10.1.3 կետում:

Հարգանքով՝

Հ.Հակոբյան

*Կատ. ԲՊԱՀՎԿՎ*
*Հ. Հակոբյան*
*հեռ. 010 31-78-37*